# ԹԱՂՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԵՐԸ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

*Թաղման յուրաքանչյուր ծեսի կարևորագույն բաղադրիչներից է նրա ծիսակարգը, որտեղ դրսևորվում է հուղարկավորողների վերաբերմունքը ննջեցյալի աճյունի հանդեպ: Ծիսակարգը հնարավոր է մասնատել մի շարք տարրերի՝ թաղման եղանակ, տեսակ, աճյունի տեղադրություն (դամբարանի որոշակի հատվածում), կմախքի դիրք, դիակի ու դեմքի ուղղվածություն, աճյունի հանգչելատեղ, վիճակ և այլն: Միևնույն դամբարանադաշտում ծիսակարգի տարբերությունները կարող են պայմանավորված լինել հնագիտական մշակույթի փոփոխությունով կամ էթնիկական անհամասեռությամբ, սակայն պարտադիր չէ, որ ծիսակարգի երկակիությունը էթնիկական երկվության արտացոլումը լինի[1]: Նույն դամբարանադաշտի համաժամանակյա թաղումներում ծիսակարգի բազմաձևությունը կարող է լինել նաև սոցիալական անհավասարության կամ մահվան հանգամանքների արդյունք[2]:*

*Մեզ հաջողվել է տեղեկություններ քաղել Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանների ընդամենը 54 ուշբրոնզեդարյան դամբարանադաշտերի հուղարկավորման ծիսակարգերի վերաբերյալ, մինչդեռ հայտնի հուշարձանների թիվը շատ ավելին է: Տեղեկատվության այդ բացը մասամբ բացատրվում է մի շարք դամբանադաշտերից եզակի պատահական գտածոների առկայությամբ, մասամբ էլ՝ պեղումների մասին հաղորդագրությունների անլիարժեքությամբ, որոնցում երբեմն տեղեկություններ են տրվում միայն հայտնաբերված իրերի կամ թաղման կառույցների վերաբերյալ: Սակայն ապացուցելու հարկ չկա, որ դամբարանների պեղումների վերաբերյալ թեկուզ փոքրածավալ հաղորդագրությունը, նախևառաջ, տեղեկատվություն է դրանցում ամփոփված ննջեցյալների մասին[3]:*

ԹԱՂՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ: *Ուշ բրոնզի դարաշրջանում ննջեցյալները տարբեր կերպ են հուղարկավորվել: Մի շարք դեպքերում դամբարան է դրվել հանգուցյալի դին, երբեմն դիակն այրվել է, այնուհետև՝ աճյունն ամփոփվել, որոշ*

---

[1] М. Э л и а д е. Космос и история. Избранные работы. М., 1987, с. 203.

[2] Б. Б. П и о т р о в с к и й. Археология Закавказья. С древнейших времен до I тысячелетия до н. э. Л., 1949, с. 87; В. М. М а с с о н. Древние гробницы вождей на Кавказе (некоторые аспекты социологической интерпретации).– В кн.: “Кавказ и Восточная Европа в древности”. М., 1973, с.105.

[3] *Հանգուցյալի աճյունը դիտարկվում է որպես թաղման համալիրը «կազմակերպող սկիզբ», յուրօրինակ սրբազան մի կենտրոն, որն ամբողջականություն է հաղորդում ողջ համակարգին (*Ю. А. С м и р н о в. Лабиринт. Морфология преднамеренного погребения. М., 1997, с. 35*):*

*դամբարաններում դին մասնատվելուց հետո է թաղվել և այլն: Ըստ այդմ՝ առանձնացվում են թաղման հետևյալ եղանակները. ա) դիաթաղում, բ) դիամասնատում, գ) գլխի թաղում, դ) երկրորդվող դիաթաղում (վերահուղարկավորում), ե) դիակիզում, զ) հուշադամբանային «թաղում»:*

*ա)* Դիաթաղում*: Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում հուղարկավորման ամենատարածված եղանակը դիաթաղումն է: Այն հանդիպում է հիշյալ 54 դամբարանադաշտերից 48-ում: Ըստ որում, 39 դամբանադաշտերում ննջեցյալներն ամփոփվել են միայն դիաթաղման եղանակով, իսկ մնացած 9-ում թաղման այս կերպը զուգակցվել է այլ ձևերի հետ: Դիաթաղման եղանակը, ըստ երևույթին, նույնքան հին է, որքան՝ «հուղարկավորություն» հասկացությունն ընդհանրապես (հնարավոր է, որ Եվրասիայում մահացածի մարմինն սկսել են կանխամտածված «հողին հանձնել» մուստյերյան դարաշրջանում, մոտավորապես 90-70 հազար տարի առաջ)[4]: Հիշյալ եղանակը թաղման հնագույն և կայուն ձևերից է, որի կիրառությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում հավաստված է դեռևս նորքարեդարում[5] և պղնձեքարեդարում[6]: Ուշբրոնզեդարյան հինգ դամբարանադաշտերում դիաթաղման եղանակն ուղեկցվել է գանգից ստորին ծնոտի անջատումով: Այսպես, Արուճի (Շամիրամ 2) դամբանադաշտի №5 դամբարանում (ուշ բրոնզի վաղ փուլ) հանգուցյալի ստորին ծնոտը հայտնաբերվել է գլխի ետևում, գագաթոսկրի մոտ[7]: Համանման երևույթ է դիտվել Էլառի №38 դամբարանում[8]: Մաստարայի դամբարանադաշտի №6 դամբարանում (ուշ բրոնզի ուշ փուլ) ննջեցյալի ծնոտը գանգից առանձնացված է եղել և չի գտնվել[9]: Լճաշեն 2 դամբարանադաշտի №208 դամբարանում հանգուցյալի ծնոտը գտնվել է ոտքերի մոտ դրված քերեդանի մեջ[10], իսկ Ռուսթեփեսի բնակատեղի -1 դամբարանում (ուշ բրոնզի վաղ փուլ) ամփոփված անձի ստորին ծնոտը գտնվել է գանգի*

---

[4] Ю. А. С м и р н о в. Морфология погребения. (Опыт создания базовой модели).– В кн.: “Исследования в области балто-славянской духовной культуры: Погребальный обряд”. М., 1990, с. 216.

[5] И. Г. Н а р и м а н о в, Г. Ф. Д ж а ф а р о в, А. Д. Д ж а ф а р о в а. О работе Мильско-Карабахской экспедиции.– В кн.: “Археологические открытия (*այսուհետև* ՝АО) 1986 года”. М., 1988, с. 462-463.

[6] О. А. А б и б у л л а е в. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982, с. 39-50.

[7] *Գ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան -5 դամբարանը (Թաղման ծեսը մեկնաբանելու փորձ).– ՊԲՀ, 2005, №3, էջ 161:*

[8] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Էլառ - Դարանի. Երևան, 1979, էջ 89:* E. K h a n z a d i a n. Metsamor 2. La necropole, vol. 1. Les tombes du bronze moyen et recent. Neuchâtel – Paris, 1995, p. 80.

[9] *Բերված օրինակը պետք է ընդունել որոշակի վերապահումով, քանի որ ամբողջական դիադրում, այնուամենայնիվ, չի արձանագրվել (տե՛ս Պ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Մաստարայի դամբարանադաշտի պեղումների արդյունքները.– Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր: Երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանս. Զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԵԳԿ). Երևան, 1988, էջ 10):*

[10] *Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Լճաշեն 2 դամբարանադաշտի 1990 թ. պեղումների հաշվետվությունը (մեքենագիր): Առիթից օգտվելով, շնորհակալություն եմ հայտնում Լ. Ա. Պետրոսյանին՝ պեղումների հաշվետվությունը սիրալիր կերպով մեզ տրամադրելու համար:*

*կողքին[11]: Ավելացնենք, որ Արուճի և Մաստարայի հիշյալ թաղումները պատկանում են 50–60 տարեկան տղամարդկանց: Հետաքրքիր է, որ Քարաշամբի դամբարանադաշտի մի շարք դամբարանների համար գանգերից ծնոտների հեռու գտնվելն օրինաչափ է համարվում[12]: Այսպիսով, դիադրման եղանակում, որպես ենթաեղանակ, հնարավոր է առանձնացնել գանգից ստորին ծնոտի անջատումով թաղումները: Հիշյալ սովորությունը Հայաստանում գոյատևել է հելլենիստական դարաշրջանը ներառյալ[13]: Այս արարողության նպատակին և հիմքում ընկած պատկերացումներին մենք արդեն անդրադարձել ենք[14]:*

*բ)* Դիամասնատում*: Առայժմ հայտնի են ընդամենը 10 դամբարանադաշտեր, որոնցում այս եղանակով հուղարկավորություններ են կատարվել (Արթիկ, Ստեփանավան, Վերին նավեր, Քարաշամբ, Թալին, Ապարանի ջրամբարի ափ, Հնաբերդ, Լճաշեն 2, Քանագեղ, Արծվանիկ): Դամբարանադաշտերից ոչ մեկում ննջեցյալների դիամասնատման եղանակը միակը չի եղել, այն միշտ համադրվել է թաղման մյուս ձևերի հետ: Արթիկի №115 դամբարանում հանգուցյալի գանգը և կմախքի մյուս մասերն անկանոն կիտված են եղել իրար վրա: № 88 դամբարանում ննջեցյալի գանգը գտնվել է դամբանախցի կենտրոնական հատվածում, իսկ կծկված կմախքը՝ խցի ձախ մասում. նման պատկեր է դիտվել №127-ում, միայն թե գանգի մոտ գտնվել են նաև կոնքոսկրերը[15]: № 135 դամբարանի կենտրոնում հայտնաբերվել են հանգուցյալի գանգը և վերջավորությունները, իսկ կմախքի մյուս մասերը դրված են եղել խցի մուտքի մոտ[16]: Հավանաբար, թաղումը դիամասնատման եղանակով է կատարվել Թալինի դամբանադաշտի № 8 դամբարանում, որտեղ ննջեցյալի գանգը դրված է եղել ոտքի ոսկորների վրա[17] և Հնաբերդի B1 դամբարանում, որտեղ 45–55 տարեկան կնոջ գանգն առանձնացված է եղել իրանից, իսկ մարմինը տեղադրվել է ձախ կողքի վրա կծկված դիրքով[18]: Քանագեղի № 7 դամբանաթմբի № 1 խցում 50–55 տարեկանում մահացած տղամարդու ոսկորները կուտակված էին անկանոն վիճակում, իսկ գանգն ընկած էր աջ գագաթոսկրի վրա,*

---

[11] О. А. Даниелян. Впускные погребения из поселений Рустепеси и Иланлы-Тепе.– “Материальная культура Азербайджана”, т. VIII. Баку, 1976, с. 76.

[12] *Վ. Հովհաննիսյան, Ֆ. Մուրադյան. Քարաշամբի դամբարանադաշտի №117 դամբարանը.– ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1986, №4, էջ 91:*

[13] Г. А. Тирацян. Культура древней Армении. VI в. до н. э.–III в. н. э. (по археологическим данным). Ереван, 1988, с. 103.

[14] *Գ. Թումանյան. նշվ. հոդվ., էջ 167-168:*

[15] Т. С. Хачатрян. Материальная культура древнего Артика. Ереван, 1963, с. 190, 203.

[16] Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 146.

[17] *Պ. Ավետիսյանի բանավոր հաղորդումը. տե՛ս նաև Պ. Ս. Ավետիսյան, Ֆ. Մ. Մուրադյան. Պեղումներ Թալինի նորակառույցներում.– Հայաստանի Հանրապետությունում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԴՀԱԱ). Երևան, 1991, էջ 27:*

[18] *Ս. Մելքոնյան. Հնաբերդի ուշբրոնզեդարյան դամբարանների պեղումները.– Հայաստանի հնագույն մշակույթը. Զեկուցումների հիմնադրույթներ. Երևան, 2001, էջ 29:*

*հիմնային մասով դեպի վեր*[19]*: Դիամասնատման եղանակում կարելի է առանձին տարբերակով դիտարկել այն թաղումները, որոնցում մահացածի գլուխը զատվել է մարմնից, ըստ որում, հաճախ, գլխի նկատմամբ ցուցաբերված է հատուկ վերաբերմունք: Այսպես, օրինակ, Արթիկի և Լճաշեն 2 դամբարանադաշտերում դիտարկվել են դեպքեր, երբ մարդու գանգը դրված է քերեղանի մեջ կամ պարզապես զետեղված է խցի կենտրոնական հատվածում, իսկ կմախքի ոսկորները գտնվել են դամբանախցի տարբեր մասերում: Ենթադրվում է, որ Ստեփանավանի Չեշմանիս տեղանքի № 5 դամբարանում ննջեցյալի գլուխը կտրված և շրջված է եղել հակառակ ուղղությամբ*[20]*: Արթիկի № 145 դամբարանում տարանջատված կմախքը հայտնաբերվել է դամբանախցի կենտրոնում, իսկ գանգը՝ անկյունում, իսկ № 158 դամբարանում հանգուցյալի գլուխը, որի շուրջը տուֆ քարեր են շարվել, թաղվել է մասնատված դիակից հեռու*[21]*: Դիամասնատման եղանակը (մասնավորապես՝ գանգանջատման տարբերակը) կիրառվել է դեռևս միջին պալեոլիթում*[22]*:*

*գ)* Գլխի թաղում*: Արթիկի և Լոռի բերդի որոշ դամբարաններում թաղվել է միայն ննջեցյալի գլուխը՝ առանց մարմնի մյուս մասերի: Օրինակ, Արթիկի դամբարանադաշտի № 230 դամբարանի հուղարկավորման խցի կենտրոնական հատվածում դրված է եղել հանգուցյալի գանգը՝ շրջապատված տուֆ քարերով, իսկ № 174-ում ննջեցյալի գանգը գտնվել է արևելյան պատի մոտ տեղադրված քերեղանի մեջ: Երկու դամբանախցերում էլ մարդու կմախքի այլ մասեր չեն գտնվել: Լոռի բերդի № 85 դամբարանում նույնպես գլխի թաղում է կատարվել: Այս դամբարանադաշտում հիշյալ եղանակը կիրառվել է նաև միջին բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում*[23]*: Միջին բրոնզի դարաշրջանում միայն գլխի թաղում կատարվել է նաև Հառիճի դամբանադաշտում*[24]*: Գառնիի ավերված մի դամբարանից (մ. թ. ա. II հազ. վերջ - I հազ. սկիզբ) գտնված քերեղանի մեջ մարդու գանգ է դրված եղել*[25]*:*

*դ)* Երկրորդվող դիաթաղում (վերահուղարկավորում)*: Այս եղանակի էությունն այն է, որ թաղումը կատարվել է երկու փուլով: Սկզբում դին դրվել է նախանշված վայրում, որտեղ այն փտել է կամ հոշոտվել գազանների և թռչունների կողմից, որից հետո փափուկ հյուսվածքներից ազատված կմախքի մնացորդները հավաքվել և դամբարան են դրվել: Հիշյալ եղանակով, ըստ երևույ-*

---

[19] A. P i l i p o s y a n, R. M k r t c h y a n, G. T u m a n y a n, N. P a r m e g i a n i, R. B i s c i o n e. Armenian-Italian Archaeological Expedition Field Season 2003.– “Studi Micenei ed Egeo-Anatolici”, vol. XLV, 2003, pp. 320-325.

[20] *Ս. Դ ևեջյան. Հնագիտական հետազոտություններ Տաշիր - Զորագետում. Երևան, 2001, էջ 92:*

[21] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака, с. 146.

[22] Ю. А. С м и р н о в. Морфология погребения, с. 216.

[23] *Ս. Հ. Դ ևեջյան. Լոռի-բերդի 1989–1990 թթ. պեղումների արդյունքները.– ԴՀԱԱ, 1991, էջ 39-40:*

[24] *Լ. Ե. Խաչատրյան. Միջին բրոնզեդարյան դամբարաններ Հառիճից.– ԴՀԱԱ, 1987, էջ 8-11:*

[25] *Կմախքի ոսկորների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է. տե՛ս Է. Վ. Խանզադյան. Գառնի IV. Երևան, 1969, էջ 130:*

*թին, հուղարկավորություններ են կատարվել Աշտարակի Խոջաբաղերի, Շամիրամի, Քարաշամբի և, գուցե, Շիրակավանի դամբարանադաշտերում: Խոջաբաղերի դամբանադաշտում ամփոփված ննջեցյալների կմախքների մնացորդների իրավիճակը որոշ եզրահանգումների հնարավորություն է տալիս[26]: Դամբարաններից ոչ մեկում մարդու ամբողջական կմախք չի գտնվել: Բացի №1 դամբարանից, մնացած բոլոր թաղումներում հայտնաբերվել են մարդկանց ատամներ, №2, 4–6 դամբանախցերում՝ նաև կմախքի այլ մասեր: Կմախքների պահպանված մնացորդները (հիմնականում խոշոր ոսկորներ) տեղադրվել են դամբանախցերի երկայնքով, իսկ ատամները և գանգերի պահպանված հատվածները՝ դամբանախցերի հյուսիսային կողմերում: Կարելի է եզրակացնել, որ քննարկվող դամբանախմբում, ըստ երևույթին, ննջեցյալներն ամփոփվել են վերահուղարկավորման եղանակով[27]: Այս կերպ են կատարվել նաև թաղումները Շամիրամի №1, 2, 5 մեծ դամբանաբլուրներում, որոնցում մահացածների թերի կմախքները կամ առանձին ոսկորները դամբարան են իջեցվել փայտե պատգարակի վրա[28] և Քարաշամբի ուշ բրոնզի դարաշրջանի ուշ փուլին պատկանող որոշ դամբարաններում, որտեղ ամփոփվել են փափուկ հյուսվածքներից մաքրված և մասնատված կմախքներ, այսինքն՝ «տեղի է ունեցել վերաթաղում»[29]: Շիրակավանի №26 դամբարանի պեղումներով «տպավորություն է ստացվել», որ այդտեղ «թաղվել են դիակի առանձին մասերը» (գտնվել են մարդու կոնքոսկրն ու ստորին ծնոտը)[30]:*

*ե)* Դիակիզում*: Ուշբրոնզեդարյան Հայաստանի դամբարանադաշտերում հանգուցյալներն ամփոփվել են նաև դիակիզման եղանակով: Վերին նավեր դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան դամբարաններում «սովորական թաղումների հետ միասին կիրառվել է նաև դիակիզում»[31]: Ենթադրվում է, որ Լճաշեն 2-ի №90, 108, 118 և 150 դամբարաններում, որոնցում ննջեցյալի կմախք չի հայտնաբերվել, թաղումը կատարվել է դիակիզման եղանակով: Թաղման գույքի հիման վրա հետևություն է արվում, որ հիշյալ եղանակով հուղարկավորվել են քրմական դասի ներկայացուցիչները[32]: Դիակիզման եղանակով կատարված թաղումներ են ենթադրվում նաև Լոռի բերդի №7, 52,*

---

[26] *Մարդաբանական ուսումնասիրությունը կատարել է մարդաբան Ա. Կ. Փալիկյանը:*

[27] *Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Աշտարակի Խոջաբաղերի ուշբրոնզեդարյան դամբարանները.– ՊԲՀ, 1977, №2, էջ 253:*

[28] Г. Е. А р е ш я н. Раскопки Больших шамирамских курганов.– АО 1981 года. М., 1983, с. 425-426.

[29] *Վ. Է. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1987 թ. պեղումները Քարաշամբի դամբարանադաշտում.– ԴՀԱԱ, 1989, էջ 16:*

[30] *Ռ. Մ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Ս. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն (այսուհետև՝ Ռ. Թորոսյան և այլք). Հին Շիրակավան, Երևան, 2002, էջ 32-33:*

[31] *Հ. Ե. Ս ի մ ո ն յ ա ն. Վերին նավեր դամբարանադաշտի 1977–1978 թթ. պեղումները.– ԴՀԱԱ, 1979, էջ 8:*

[32] *Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Լճաշեն 2 դամբարանադաշտի 1989 թ. պեղումների հաշվետվությունը (մեքենագիր):*

*84 դամբարաններում[33]: Դատելով ուղեկցող նյութից՝ այս դամբարանները, հավանաբար, պատկանել են «ազնվատոհմիկ» ննջեցյալների: Ասվածից կարելի է ենթադրել, որ ուշ բրոնզի դարաշրջանում Հայաստանում դիակիզման եղանակը լայն տարածում չուներ: Այդ եղանակով, երբեմն, ամփոփվել են սոցիալական բարձր դիրք գրավող հանգուցյալների աճյունները: Կարծիք է հայտնվել, որ թռեղք-վանաձորյան մշակույթի դամբանային համալիրներում հուղարկավորման հիշյալ եղանակը կարող է սոցիալական շերտավորման հայտանիշ հանդիսանալ (ցեղային ավագանին թաղվել է այս ձևով, իսկ շարքային համայնականները՝ դիադրման կամ մեկ այլ եղանակով)[34]: Թաղման դիակիզման եղանակը կիրառություն է ունեցել Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան նախորդ մշակույթներում, իսկ Եվրոպայում, ըստ երևույթին, հանդես է եկել նորքարեդարի ուշ փուլում[35]:*

*զ)* Հուշադամբանային «թաղում»*: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում բավականաչափ տարածված էր հուշադամբանների (կենոտաֆ) կիրառությունը թաղման ծեսում: «Կենոտաֆ» բառը փոխառություն է հունարենից և նշանակում է դատարկ դամբան, այսինքն՝ աճյուն չպարունակող դամբարան, որը կառուցվում էր այն դեպքում, երբ մահացածի դիակն անմատչելի էր թաղման համար[36]: Կենոտաֆը կառուցելիս և ուղեկցող գույքը տեղադրելիս, հավանաբար, հնարավորին չափ անշեղորեն պահպանվել է սահմանված կարգը: Հուշադամբաններ են հայտնաբերվել ուշբրոնզեդարյան 8 դամբանադաշտերում: Արթիկի դամբարանադաշտում գտնվել են 60-ից ավելի կենոտաֆներ: Մի շարք դեպքերում զոհաբերված կենդանիների ոսկորներից առկա են միայն վեգերը, իսկ կմախքները չկան: Բացառությամբ 3–4 դեպքի՝ զոհաբերված կենդանու կմախք պարունակող մյուս հուշադամբաններում կենդանու գանգը բացակայում է, իսկ որտեղ ննջեցյալի աճյուն է ամփոփված, սովորաբար, զոհաբերված կենդանու գանգն առկա է կմախքի հետ միասին: Ավելացնենք, որ Արթիկի հուշադամբանները մինչև առաստաղը լցված են հողով: Վերին նավերում հայտնաբերվել են երկու կենոտաֆ: №19 դամբանաբլուրի թաղման խցին արևելյան կողմից կցված է խորհրդանշական զոհարան՝ կառուցված մշակված բազալտե քարերով, որոնցից մեկի վրա պատկերված է վահանով նետից պաշտպանվող մարդ[37]: Մեկ այլ՝ ժայռափոր դամբանախցի արևմտյան կողմից հպված է տուֆի բեկորներով կառուցված կիսաշրջան, որի քարերից մեկի վրա հիերոգլիֆակերպ փորագիր պատկեր*

---

[33] С. Г. Д е в е д ж я н. Лори-Берд, I. Ереван, 1981, с. 27; *Ս. Հ. Դ ևեջյ ա ն. Լոռի բերդի 1989–1990 թթ. պեղումների արդյունքները, էջ 39:*

[34] В. М. М а с с о н. *Նշվ. աշխ., էջ* 105:

[35] А. Л. М о н г а й т. Археология Западной Европы. Каменный век. М., 1973, с. 200.

[36] Словарь иностранных слов. М., 1987, с. 225.

[37] А. Е. С и м о н я н. Раскопки могильника Верин Навер.– АО 1980 года. М., 1981, с. 426. *Ն ույնի՝* Могильник эпохи бронзы Верин Навер.– “Краткие сообщения Института археологии”, вып. 176, 1983, с. 95.

*կա[38]: Երեք հուշադամբաններ են գտնվել Ապարանի ջրամբարի մոտ: Այստեղ՝ №6 դամբանախցում, ուղղահայաց դրված տուֆակտորի առջև հորիզոնական դիրքով եղել է տուֆի մեկ այլ բեկոր, իսկ -11 հուշադամբանի արևմտյան պատի մեջ՝ գլխիվայր և շրջված երեսով, դրված է եղել բազալտե կուռք[39]: Հուշադամբաններ են հայտնաբերվել նաև Շիրակավանի, Շամիրամի, Քարաշամբի, Լճաշենի, Փարվանայի, Մադնիսճալայի դամբարանադաշտերում:*

ԹԱՂՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ: *Մեկ դամբարանում ամփոփվել են տարբեր թվով ննջեցյալներ: Թաղման համալիրները նախատեսվել են և՛ միայն մեկ հանգուցյալի, և՛ մի քանի տասնյակ մահացածների համար: Սովորաբար առանձնացվում են հետևյալ տարատեսակ թաղումները. ա) միայնակ (անհատական), բ) զույգ (տարասեռ չափահաս ննջեցյալներ), գ) մոր և մանկան (կին և մեկ կամ մի քանի երեխա), դ) խմբային (մասնավոր դեպքում՝ ընտանեկան):*

*ա)* Միայնակ թաղումներ: *Ուշ բրոնզի դարաշրջանում գերակշիռ մեծամասնություն են կազմում միայնակ թաղումները: Բոլոր 43 դամբարանադաշտերում, որոնց թաղման տեսակը մեզ հայտնի է, միայնակ թաղումներ են կատարվել, դրանցից 30-ում կիրառվել է բացառապես անհատական հուղարկավորման տեսակը: Հետաքրքիր է, որ սևան-արցախյան և կարմիրբերդյան մշակույթների դամբանային համալիրներին ևս բնորոշ են միայնակ թաղումները[40]: Համանման իրավիճակ է արձանագրված նաև Վրաստանի ուշ բրոնզի դարաշրջանի դամբարաններում[41]:*

*բ)* Զույգ թաղումներ: *Նման թաղումներ են կատարվել Աշտարակի Խոջաբաղերի, Կարմիր բերդի, Լճաշեն 2, Ստեփանավանի դամբանադաշտերում: Խոջաբաղերի դամբանախմբում հայտնի է զույգի թաղման ընդամենը մեկ դեպք՝ №2 դամբարանում հուղարկավորվել են մոտավորապես 30 տարեկան տղամարդ և կին (անորոշ տարիքի): Լճաշեն 2 դամբարանադաշտի №88, 192, 194, 196, 213 դամբարաններից յուրաքանչյուրում ամփոփվել են երկու հանգուցյալներ՝ աջ և ձախ կողքի: Ստույգ տեղեկություններ չկան նրանց տարասեռության մասին, ուստի այս թաղումները որոշ հավանականությամբ զույգ են համարվում: Հետաքրքիր է, որ -194 և 196 դամբանախցերը կառուցված են միևնույն կրոմլեխի ներսում և երկուսում էլ ննջեցյալների կմախքները գտնվել են մեկ դիամահճի վրա: Թվում է, թե տարասեռ հանգուցյալներ են թաղված*

---

[38] *Հ. Ե. Սիմոնյան. Վերին նավեր դամբարանադաշտում 1981 թ. կատարված դաշտային աշխատանքների արդյունքները.– ԴՀԱԱ, 1983, էջ 18:*

[39] *Ֆ. Մ. Մուրադյան. Պեղումները Ապարանի ջրամբարի ափին 1986 թ.– ԴՀԱԱ, 1987, էջ21: Նույնի՝ Պեղումներ Ապարանի ջրամբարի ափին.– ԵԳԿ VIII, 1988, էջ 55:*

[40] А. Е. Симонян. Культура эпохи средней бронзы северных районов Армянского нагорья.– Автореферат дис. на соиск. уч. степени канд. ист. наук. Л., 1984, с. 11; К. Х. Кушнарева. Севано-узерликская культура периода средней бронзы на территории Южного Кавказа.– В кн.: “Культурное наследие Востока”. Л., 1985, с. 102.

[41] К. Н. Пицхелаури, Ц. Н. Менабде. Археологические памятники с. Гадрекили. Тбилиси, 1982, с. 146 (на груз. яз.); А. Н. Каландадзе. Самтавро. Археологические памятники доантичной эпохи. Тбилиси, 1980, с. 175; *Նույնի*՝ Археологические памятники доантичной эпохи могильника Самтавро. Тбилиси, 1981, с. 118, 176; В. Садрадзе. Работы в Церовани и Нареквави.– АО 1980 года, с. 409-410 и др.

*Կարմիր բերդի դամբարանադաշտի № 3 դամբարանում, որտեղ նրանք հանգչում են աջ և ձախ կողքերի վրա: Ստեփանավանի № 17 դամբանախցի հատակին տեղադրված են եղել կմախքներ, «մեկը՝ տղամարդու, մյուսը՝ հավանաբար, կնոջ»[42]: Վրաստանի համաժամանակյա դամբանադաշտերում զույգ թաղումները հազվադեպ են: Հայաստանում առայժմ հայտնի հնագույն՝ պղնձեքարեդարյան, զույգ թաղումները գտնվել են Նախճավանի Մոխրաբլուրում[43]:*

*գ)* Մոր և մանկան հուղարկավորություններ*: Մոր և մանկան թաղումներ են հայտնաբերվել, առայժմ, Աշտարակի Խոջաբաղերի և Լճաշեն 2 դամբանադաշտերում: Խոջաբաղերի № 5 դամբարանում հայտնաբերվել են կնոջ և երեխայի կմախքների մնացորդներ: Լճաշեն 2-ի № 92 դամբարանում պատգարակի վրա թաղվել է կին, կրծքի մոտ՝ երեխա, № 124-ում երեխայի դիակը տեղավորված է եղել մոր ձեռքերի վրա, գլուխը՝ կրծքին, երկուսն էլ հանգչել են միևնույն դիամահճին: Որոշ դեպքերում երեխայի դիակը տեղադրվել է մահացած մոր ոտքերի մոտ, երբեմն՝ գլխակողմում: Մոր և մանկան համատեղ թաղման իրողությունը հավաստված է արդեն վերին պալեոլիթում[44], իսկ Հայկական լեռնաշխարհում՝ պղնձեքարեդարում[45]:*

*դ)* Խմբային թաղումներ*: Այսպիսին ենք համարում այն թաղումները, որոնցում առկա են առնվազն երկու նույնասեռ չափահաս ննջեցյալների աճյուններ, պայմանով, որ մի թաղումը ստորադասված չէ մյուսին: Ուշբրոնզեդարյան 9 դամբանադաշտերում կատարվել են նմանօրինակ հուղարկավորումներ: Խմբային թաղումներով ուշբրոնզեդարյան դամբարաններ են հայտնաբերվել Նորատուսում[46], Լճաշեն 2-ում, Վերին նավերում[47], Թալինում[48]: Որոշ դեպքերում՝ խմբային թաղումներից կարելի է առանձնացնել ընտանեկան թաղման ենթատեսակը: Այսպես, Վանաձորի № 3 դամբարանում թաղվել են 4 հոգի՝ 2 «մեծահասակ», մեկ կին և մեկ երեխա[49]: Վերին նավերի № 15 դամբարանում պեղումներով հայտնաբերվել են երկու երեխայի և մի քանի չափահաս մարդու կմախք[50]: Քանագեղի № 5 դամբանաբլուրի I սրահում հուղարկավորվել են 3 տղամարդ, 1 կին և 1 երեխա: Շիրակավանի № 77 դամբարանում գտնվել են կնոջ, երեխայի և չափահաս ննջեցյալի (սեռն՝ անհայտ) կմախքներ[51]: Հնաբերդի դամբանադաշտի A2 դամբարանում հայտնաբերվել են չափահաս տղամարդու, կնոջ և պատանու կմախքներ[52]: Հիշյալ դամբարաններ-*

---

[42] *Ս. Դ ևեջյան. Հնագիտական հետազոտություններ..., էջ 99:*

[43] Օ. Ա. Աբիբուллաև. *Նշվ. աշխ., էջ 39, 48-49:*

[44] Г. Чайлд. Прогресс и археология. М., 1949, с. 142.

[45] Օ. Ա. Աբիբուллաև. *Նշվ. աշխ., էջ 43:*

[46] *Ա. Ս. Փիլիպոսյան. Պեղումներ Սևանի կոլեկտորի Նորատուսի հատվածում.– ԴՀԱԱ, 1991, էջ 30:*

[47] *Հ. Ե. Սիմոնյան. Պեղումներ Վերին նավերում.– ԴՀԱԱ, 1989, էջ 12:*

[48] *Պ. Ս. Ավետիսյան. Պեղումներ Թալինի նորակառույցներում.– ԴՀԱԱ, 1991, էջ 27:*

[49] *Կ. Ղաֆադարյան. Դամբարանների պեղումներ Կիրովականում.– «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1941, №3-4, էջ 59:*

[50] А. Е. Симонян. Раскопки могильника Верин Навер.– АО 1978 года. М., 1979, с. 524.

[51] *Ռ. Թորոսյան և այլք. նշվ. աշխ., էջ 37:*

[52] *Ս. Մելքոնյան. նշվ. աշխ., էջ 29:*

*րից յուրաքանչյուրում, հավանաբար, թաղվել են մեկ ընտանիքի անդամներ: Ենթադրությունը, որ Լճաշեն 1 դամբանադաշտի № 2 մեծ դամբանաբլրի թաղման սրահում կարող էին ամփոփված լինել մեկ ընտանիքի անդամներ[53], կարոտ է լուրջ հիմնավորման, քանի որ նախ պիտի ապացուցել, որ այդտեղ կատարվել են հաջորդական թաղումներ: Այսպիսով, խմբային թաղումներ կատարվել են համայնական կամ ընտանեկան դամբաններում: Հուղարկավորության այս տեսակը Եվրոպայում կիրառվել է դեռևս վերին պալեոլիթում[54], իսկ Առաջավոր Ասիայում, կարծես թե, սկզբնապես ի հայտ է գալիս նատուֆյան մշակույթում[55]: Հայաստանում այն հավաստված է սկսած պղնձեքարեդարից (Նախճավան): Ընտանեկան դամբանների վերաբերյալ տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել ընտանիքի և ամուսնության զարգացման պատմությունը, ինչպես նաև առանձին ցեղախմբերի «խնամիական» կապերը:*

ԿՄԱԽՔԻ ԴԻՐՔԸ: *Թաղման ծիսակարգի ոչ պակաս կարևոր բաղադրիչներից է նաև ննջեցյալի դիրքը: Հանգուցյալներն ուշբրոնզեդարյան դամբարաններում տեղադրվել են տարբեր դիրքերով. ա) կծկված (խիստ կամ թույլ, աջ կամ ձախ կողքի), բ) նստած, գ) մեջքի վրա, դ) կքանստած, ե) բերանքսիվայր:*

*ա)* Կծկված թաղումներ*: Ամենից հաճախ դիակները տեղադրվել են աջ կամ ձախ կողքի վրա, կծկված վիճակում: Կմախքների դիրքի վերաբերյալ մեզ տվյալներ են հայտնի 38 դամբարանադաշտերից, որոնցից 33-ում հիշյալ դիրքով թաղված ննջեցյալներ կան, իսկ 26 դամբանադաշտերում հանգուցյալները տեղադրվել են միայն այդպես: Հետազոտողները, երբեմն, առանձնացնում են նաև «խիստ» և «թույլ» կծկված թաղումները[56]: Մահացածներին աջ կամ ձախ կողքի վրա, ծալված վերջավորություններով թաղելու սովորությունը տարածված է բազմաթիվ երկրներում: Քնած մարդու դիրքով ամենավաղ թաղումները կատարվել են միջին պալեոլիթում[57]: Որոշ հետազոտողների կարծիքով՝ մահացածներին տարբեր դիրքերով դամբարաններում տեղադրելը, ինչպես նաև կմախքների թույլ և խիստ կծկվածությունը, կապված է հանգուցյալների*

---

[53] В. М. М а с с о н. *Նշվ. աշխ., էջ 107:*

[54] С. Н. З а м я т н и н. Очерки по палеолиту. М.–Л., 1961, с. 32.

[55] Г. Ч а й л д. Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956, с. 333; J. M e l l a a r t. Earliest Civilizations of the Near East. London, 1965, p. 26.

[56] *Ցավոք, մեզանում դեռևս ընդունված չէ կմախքի կծկվածության աստիճանը որոշել ոսկորների կազմած անկյուններով (տե՛ս* И. А. С о р о к и н а. Погребения эпохи поздней бронзы в Нижнем Прикубанье.– “Советская археология” (*այսուհետև* ՝СА), 1985, №3, с. 140): *Հազվադեպ են նաև տեղեկությունները կմախքի և դեմքի ուղղվածության, կմախքների փոխադարձ դասավորության, ձեռքերի դիրքի և այլ կարևոր մանրամասնությունների մասին (տե՛ս* Н. Б. Л е о н о в а, Ю. А. С м и р н о в. Погребение как объект формального анализа.– “Краткие сообщения Института археологии”. Вып. 148, 1976, с. 20-21*):*

[57] С. К. Д и к ш и т. Введение в археологию. М., 1960, с. 162; С. Н. З а м я т н и н. *Նշվ. աշխ., էջ* 30-32: А. Л. М о н г а й т. *Նշվ. աշխ., էջ 139-140:*

*սոցիալական դրության հետ*[58]*: Ենթադրվում է, որ կմախքի խիստ կծկվածությունը դիակը համապատասխան դիրքում կապելու հետևանք է*[59]*:*

*բ)* Նստած թաղումներ*: Մինչ այժմ նման թաղումներ են հայտնաբերվել 4 դամբանադաշտերում՝ Վանաձորի Դիմացի թաղ (դամբ. №5), Քանագեղ (դամբ. №1), Լճաշեն 2, Գետաբեկ-Կալաքենդ (դամբ. №6)*[60]*: Լճաշեն 2-ի №117 և 174 դամբարաններում ննջեցյալները թաղվել են պատգարակի վրա նստած: Հիշյալ դիրքով թաղումներ հայտնի են Եվրոպայի վերինպալեոլիթյան և ավելի ուշ մշակույթներում*[61]*:*

*գ)* Մեջքին պառկեցված թաղումներ*: Երեք դամբանադաշտերում հանգուցյալները հողին են հանձնվել մեջքի վրա պառկած դիրքով: Կողքի վրա կծկված դիրքով թաղումներից հետո այս դիրքն ամենատարածվածն է Լճաշեն 2 դամբանադաշտում: Այստեղ մեջքի վրա ամփոփված ննջեցյալների ոտքերը կծկված են, ձեռքերը՝ ծալված կրծքին, ծնոտի տակ կամ ձգված իրանի երկայնքով: Նման դիրքով տեղադրված դիակներ կան ինչպես մոր և մանկան, այնպես էլ ընտանեկան թաղումներում, ըստ որում՝ ննջեցյալները, երբեմն, հանգչում են դիամահիճների վրա: Մայիսյանի դամբարանադաշտի №3 դամբարանում ևս դիակը դրվել է մեջքի վրա, խիստ ծալված ոտքերով: Խոջալիի №14 և 16 դամբանաբլուրներում կատարվել են միայնակ դիաթաղումներ, մեջքի վրա ձգված դիրքով: Թաղման հիշյալ դիրքը հավաստված է դեռևս մուստյերյան դարաշրջանում*[62]*:*

*դ)* Կքանստած թաղումներ*: Լճաշեն 2 դամբարանադաշտի երեք դամբաններում ննջեցյալների դիերը տեղադրվել են կքանստած դիրքով (-47ա դամբանում երեխա է թաղվել, №91-ում դին դրվել է պատգարակի վրա, իսկ №115 դամբանում կքանստած դիաթաղումն ուղեկցվել է ծնոտի անջատումով): Ենթադրվում է, որ դիակը համանման դիրքով է հողին հանձնվել նաև Քեթիի №31 դամբարանում*[63]*: Վերոհիշյալ դիրքով թաղումները ևս ունեն միջինպալեոլիթյան ծագում*[64]*:*

*ե)* Բերանքսիվայր թաղումներ*: Առայժմ հայտնաբերվել են միայն Լճաշեն 2 դամբարանադաշտում: Այստեղ նման թաղումներն իրենց քանակով կազմում են երրորդ խումբը: Այդ դիրքով հողին հանձնված ննջեցյալների ոտքերը եր-*

---

[58] А. А. М а р т и р о с я н. Раскопки в Головино. Ереван, 1954, с. 108; В. А. А л е к ш и н. Социальная структура и погребальный обряд древнеземледельческих обществ. Л., 1986, с. 68, 70.

[59] В. А. М о г и л ь н и к о в. Погребальный обряд культур III в. до н. э.–III в. н. э. в западной части Балтийского региона.– В кн.: “Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тысячелетии до н. э.–I тысячелетии н. э.” М., 1974, с. 155; Н. Я. М е р п е р т, Р. М. М у н ч а е в. Погребальный обряд племен халафской культуры.– В кн.: “Археология Старого и Нового Света”. М., 1982, 46.

[60] А. А. И в а н о в с к и й. По Закавказью. Археологические наблюдения и исследования 1893, 1894 и 1896 гг.– “Материалы по археологии Кавказа”, вып. VI, М., 1911, с. 90-91.

[61] А. Л. М о н г а й т. *Նշվ. աշխ., էջ 159, 251:*

[62] С. Н. З а м я т н и н. *Նշվ. աշխ., էջ 30, 31, 36, 39:*

[63] Л. А. П е т р о с я н. Раскопки памятников Кети и Воскеаска (III–I тыс. до н. э.). Ереван, 1989, с. 57.

[64] С. Н. З а м я т н и н. *Նշվ. աշխ., էջ 32:*

*բեմն ծալված են աջ կամ ձախ կողքի, կամ գտնվում են իրանի տակ, երբեմն ձգված են, մի դեպքում՝ մեկ ոտքը ձգված է, մյուսը՝ կծկված, ձեռքերը դրված են կրծքի տակ կամ հենված ծնոտին: Դրանց մի մասը տեղադրված է դիամահիճների վրա:*

ԱՃՅՈՒՆԻ ՀԱՆԳՉԵԼԱՏԵՂԸ: *Թե ինչի վրա է տեղադրվել դամբարան իջեցված աճյունը, պայմանավորված է եղել ոչ միայն ննջեցյալի սոցիալական դրությամբ, այլև՝ մահվան և «այնկողմնային աշխարհի» մասին ունեցած պատկերացումներով: Խմբավորելով ուշ բրոնզի դարաշրջանում հանգուցյալների աճյունները հողին հանձնելու վերաբերյալ տեղեկությունները, կարելի է առանձնացնել հետևյալ տարբերակները.*

*ա)* աճյունի ամփոփումը գետնին: *Այս խմբում ընդգրկված են այն թաղումները, որոնցում աճյունի տակ որևէ փռվածք չի գրանցվել: Քննարկվող դարաշրջանում սույն խմբի թաղումները մեծամասնություն են կազմում: Որպես ենթատարբերակ կարելի է առանձնացնել այն թաղումները, որտեղ ննջեցյալի գլխի տակ որևէ իր է դրվել՝ քարե «բարձ», խեցանոթ (նաև՝ բեկորներ), զոհաբերված կենդանի և այլն: Օրինակ, Արթիկի դամբանադաշտի որոշ դամբարաններում մահացածի գլխի տակ գետաքար է դրվել: Աշտարակի Խոջաբաղերի №2 և 6 դամբանաթմբերի թաղման խցերի հյուսիսային կողմերում տեղադրված էին բազալտե տափակ որձաքարեր, որոնց վրա և կից գտնվել են մարդկանց ատամներ և գանգի մասեր: Քաղսիի մի դամբարանում հանգուցյալների գլուխների տակ դրված են եղել գետաքարեր[65]: Վանաձորի Դիմացի թաղի №1 դամբարանում ննջեցյալի կմախքը գտնվել է գետնին, գանգը՝ տափակ քարի վրա, իսկ №4 դամբարանում դրված տափակ քարի վրայից գտնվել են մարդու ատամներ: Լճաշեն 2-ի №193 դամբանում մահացածի գլխի տակ փոքր քար է դրվել, №46 և 59 դամբարաններում հողին հանձնված ննջեցյալների գլուխների տակ խեցանոթներ են տեղադրվել, իսկ -43 դամբանում հանգուցյալի գլուխը դրվել է զոհաբերված խոշոր եղջերավոր կենդանու իրանի վրա: Ռուսթեփեսիի ուշբրոնզեդարյան դամբարանում դիակի գլուխը հանգչել է խեցանոթի բեկորների վրա: Թաղման ժամանակ «գլխաքար» օգտագործելու սովորույթը գոյություն է ունեցել արդեն միջին պալեոլիթում[66], իսկ Հայկական լեռնաշխարհում՝ առնվազն պղնձեքարե դարաշրջանում (Նախճավանի Մոխրաբլուր)[67]:*

*բ)* Աճյունի տեղադրելը տապաստի վրա: *Ուշբրոնզեդարյան Հայաստանում սովորություն է եղել ննջեցյալի դին տեղադրել փռվածքի վրա կամ փաթաթել գործվածքով: Ըստ որում, հավանաբար, այդ սովորությունն առավել կիրառական է եղել, քան գրանցված է հնագիտորեն: Իհարկե, գործվածքի հայտնաբերումը դամբարանում կապված է որոշակի դժվարությունների հետ, և հնագետը, սովորաբար, տապաստի գործածության մասին եզրակացնում է կողմնակի դիտողությունների և տրամաբանական հետևությունների հիման վրա:*

---

[65] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака, с. 149.

[66] С. К. Д и к ш и т. *Նշվ. աշխ., էջ 162,* С. Н. З а м я т н и н. *Նշվ. աշխ., էջ 36:*

[67] О. А. А б и б у л л а е в. *Նշվ. աշխ., էջ 39-51:*

*Ննջեցյալները, հավանաբար, տապաստի վրա են տեղադրվել Արթիկի դամբանադաշտի մի շարք թաղումներում: Մասնավորապես, № 89 դամբարանում գտնվել է գործվածքի կտոր, որով ծածկված (փաթաթվա՞ծ) է եղել հանգուցյալի դին[68]: Քեթիի № 21 դամբանում խսիրով փաթաթված հանգուցյալի դին, ըստ երևույթին, սկզբնապես դրված է եղել սայլին[69]: «Բարակ շիվերից» պատրաստված տապաստի վրա է դրվել ննջեցյալը Լճաշեն 2-ի № 191 դամբարանում: Ամյունը տապաստի վրա տեղադրելու ավանդույթը գոյություն է ունեցել արդեն միջին քարեդարում (Եգիպտոս)[70]: Փոքր Ասիայում (Չաթալ Հյույուք) այդ սովորությունը նկատվում է նոր քարեդարում[71], իսկ Հայաստանում դրա ակունքները հասնում են, առնվազն, պղնձեքարեդար (Նախճավան):*

*գ)* Ամյունի ամփոփումը դիամահճին*: Հինգ դամբարանադաշտերում մահացածները տեղադրվել են փայտե դիամահիճների կամ պատգարակների վրա, որոնց կառուցվածքում հաճախ օգտագործվել են կաշվե փոկերով հյուսվածքներ: Շամիրամի № 1 մեծ դամբանաբլուրում դիակի մնացորդները տեղադրվել են դիամահճի վրա, որը հաղորդումներից մեկում անվանվում է «փայտե կառուցվածք»[72]: Ուշ բրոնզի դարաշրջանում փայտե պատգարակով իջեցուկ թաղում է կատարվել Ջրահովտի վաղբրոնզեդարյան կլոր կացարաններից մեկի կենտրոնում[73]: Արթիկի որոշ դամբարաններում կմախքների տակ գտնվել են փայտի քայքայված մնացորդներ[74]: Թաղման հիշյալ սովորությունը տարածված է եղել Լճաշենի դամբանադաշտերում, որտեղ դիամահիճներն ունեցել են փայտե հաստ ոտքեր, ուղղանկյուն շրջանակ և հյուսածո հիմք[75]: Լճաշեն 2-ի 202 ուշբրոնզեդարյան դամբարաններից 62-ում պատգարակով թաղումներ են կատարվել (30,7 %): Մեկ դիամահճի վրա կատարվել են անհատական, զույգ, մոր և մանկան, ընտանեկան թաղումներ: Ամյունները դիամահիճների վրա ամփոփվել են տարբեր եղանակներով և տարբեր դիրքերով:*

*դ)* Ամյունի ամփոփումը դիասայլին*: Հայաստանում առայժմ հայտնի են ընդամենը 6 ուշբրոնզեդարյան դամբանադաշտեր, որոնցում պեղումներով հայտնաբերվել կամ ենթադրվում են դիասայլերով թաղումներ: Դեռևս անցյալ դարասկզբին Ե. Լալայանը Ներքին Գետաշենի № 17 դամբարանում պեղումներով հայտնաբերել է դիասայլով «իշխանական» թաղում: Սայլը շռայլորեն զարդարանված է եղել խորհրդանշական պատկերներով: Ննջեցյալի դին դրված է եղել քառանիվ դիակառքի վրա, աջ կողքի, ոտքերը քիչ ծալված:*

---

[68] Т. С. Х а ч а т р я н. Материальная культура..., с. 38, 134.

[69] Л. А. П е т р о с я н. *Նշվ. աշխ., էջ 56:*

[70] Г. Ч а й л д. Древнейший Восток..., с. 72, 79.

[71] J. M e l l a a r t. Çatal Hüyük: A Neolithic Town in Anatolia. New York, 1967, p. 205.

[72] *Գ. Ե. Ա ր ե շ յ ա ն. Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը.– ԴՀԱԱ, 1985, էջ 14:*

[73] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Ջրահովիտի պեղումները.– ԴՀԱԱ, 1985, էջ 12:*

[74] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака, с. 139.

[75] А. О. М н а ц а к а н я н. Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г. (предварительное сообщение).– СА, 1957, № 2, с. 147.

*Դիասայլի շուրջը գտնվել է զոհաբերված 13 մարդու կմախք[76]: Հանրահայտ են Լճաշենի մեծ դամբանաբլուրների սայլերով թաղումները[77]: Այս դամբարաններից յուրաքանչյուրում հայտնաբերվել է մեկից չորս սայլ, դրանց առանձին մասեր և մարտակառքերի մանրակերտեր, որոնք, ամենայն հավանականությամբ, ամրացվել են սայլի առեղին[78]: Սայլերը երկանիվ են կամ քառանիվ, բաց են կամ ծածկված: Դրանցից շատերի զարդապատկերները փայտի փորագրության ուշագրավ նմուշներ են: Փորագրազարդերն ունեն խորհրդանշական, հմայական բնույթ[79]: Ենջեցյալի դին դամբարան է իջեցվել սայլի վրա, կծկված դիրքով: Թաղումներն ուղեկցվել են մարդկանց զոհաբերություններով: Ենթադրվում է, որ դիակիզված աճյունները Լոռի բերդի № 2 և 7 դամբարաններն են իջեցվել սայլով (կառքով)[80]: № 7 դամբարանում պեղումներով հայտնաբերվել է նաև կառքի բրոնզե մանրակերտ: Երկանիվ կառքով թաղում է կատարվել Քեթիի № 21 դամբարանում[81]: Մեռյալը հուղարկավորվել է դիաթաղման եղանակով, կծկված դիրքով, խսիրով փաթաթված: Հավանաբար, Շիրակավանի № 44 դամբանում ծածկված թափք է հայտնաբերվել, որի վրա դրված է եղել հանգուցյալի դին՝ գլխով դեպի հյուսիս, աջ կողքի կծկված, իսկ № 54-ում լծափայտի մաս է գտնվել[82]: Ենթադրվում է, որ կառքով թաղում է կատարվել Մեծամորի -10 դամբանաբլուրում[83], որտեղ ամփոփված ենջեցյալը պատկանում է «իշխող խավին»: Հիշենք նաև, որ Արթիկի և Լճաշեն 2-ի որոշ դամբաններում հայտնաբերվել են քարից կամ կավից պատրաստված սայլանվի մանրակերտեր, որոնք դրված են եղել ենջեցյալի գլխի կամ ոտքերի մոտ:*

*Հայկական լեռնաշխարհում սայլերով հուղարկավորություններ են կատարվել նաև միջին բրոնզի դարաշրջանում (Թռեղք[84], Դմանիք[85])՝ սկսած դամբանաբլրային թաղումների մշակույթից (Մանգլեաց փոր)[86]: Հիշյալ սովո-*

---

[76] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում. Երևան, 1931, էջ 100-101,* С. А. Е с а я н. Оружие и военное дело Древней Армении (III–I тыс. до н. э.). Ереван, 1966, с. 135.

[77] А. О. М н а ц а к а н я н. *Նշվ. աշխ., 146–153, ն ո ւ յ ն ի՝* Культура эпохи бронзы на побережье оз. Севан Армянской ССР.– XXV Международный конгресс востоковедов. Доклады делегации СССР. М., 1960, с. 1-6; *ն ո ւ յ ն ի՝* Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан.– СА, 1960, № 2, с. 139-152.

[78] А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 99; В. Б. Б л э к. Памятники декоративно-прикладного искусства из Лчашена.– *ՊԲՀ, 1968, №*3, *էջ 250.*

[79] *Կ. Ա վ ա գ յ ա ն. Փայտի փորագրությունը և խորհրդանշական պատկերագրությունը հին Հայաստանում.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 2, էջ 75:*

[80] С. Г. Д е в е д ж я н. *Նշվ. աշխ., էջ 25-27:*

[81] Л. А. П е т р о с я н. *Նշվ. աշխ., էջ 55:*

[82] *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն և այլք. նշվ. աշխ., էջ 33-35:*

[83] E. K h a n z a d i a n. *Նշվ. աշխ., էջ 52:*

[84] Б. А. К у ф т и н. Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, 1941, с. 81.

[85] К. К. К а х и а н и, Э. В. Г л и г в а ш в и л и, З. Р. Ц к в и т и н и д з е. Исследования на новостройках Дманисского района.– АО 1985 года, М., 1987, с. 530.

[86] Г. Ф. Г о б е д ж и ш в и л и. Бедени–культура курганных погребений. Тбилиси, 1980, с. 136. *Պատմական Մանգլեաց փոր գավառի (այժմ՝ Վրաստանի Թեթրի ծղարոյի շրջան) դամբանաբլուրներն առավել հայտնի են «բեդենյան» անվանումով:*

*րությունը բնորոշ է քաղաքակրթության այլ օջախների ևս (Շումերի վաղդինաստիական արքայական հուղարկավորություններ, խեթական թաղման ծես և այլն): Մարտակառքը, խորհրդանշելով տիրոջ իշխանությունը, միաժամանակ մարմնավորում էր պետականության գաղափարը[87]: Այն՝ որպես արքայական իշխանության խորհրդանիշ, հանդես է գալիս Խեթական տերությունում[88], Վանի թագավորությունում[89] և Հին աշխարհի այլ երկրներում: Դիասայլով թաղումը որակական այն տարբերակող հայտանիշներից է, որով թաղման ծիսակարգում դրսևորվում է հասարակության սոցիալական խոր շերտավորումը և ավագանու առանձնացումը համայնքի շարքային անդամներից[90]:*

## ПОГРЕБАЛЬНЫЕ РИТУАЛЫ В ПОЗДНЕБРОНЗОВОЙ АРМЕНИИ

*ГАРЕГИН ТУМАНЯН*

Р е з ю м е

Одним из важнейших компонентов погребального обряда является ритуал захоронения, отражающий отношение сородичей к праху покойника. Он может быть расчленен на ряд элементов: способ погребения, тип (вид) захоронения, помещение останков (на определенном участке могильного сооружения), положение скелета, направленность трупа и лица покойника, место почивания праха и т. д. Каждый из перечисленных элементов, в свою очередь, можно раздробить на несколько компонентов. Например, в способе погребения можно выделить следующие составляющие: а) ингумация, б) расчленение трупа, в) захоронение головы, г) перезахоронение, д) кремация, е) кенотаф. Некоторые способы могут иметь свои варианты– ингумация с отделением нижней челюсти или отделение от трупа только головы. В типе захоронения можно выделить а) одиночные, б) парные, в) матери и ребенка, г) коллективные (вариант–семейные) погребения, а в положении скелета–а) скорченное (слабо или сильно, на правом или левом боку), б) сидячее, в) на спине, г) на корточках, д) ничком. На основании анализа данных из нескольких десятков могильников северо-востока Армянского нагорья, автор пришел к выводу, что самыми престижными считались погребения с колесницами или на повозках– качественно диференцирующие признаки, с помощью которых в погребальном ритуале проявляется глубокое социальное расслоение общества и выделение знати из рядовых общинников.

---

[87] Г. Ч а й л д. Древнейший Восток..., с. 230-232.

[88] Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Т. 2. Тбилиси, 1984, с. 726.

[89] Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 87.

[90] *Սույն ուսումնասիրության շրջանակներում, տեղի սղության պատճառով, բաց ենք թողնում աճյունի վիճակի (հիմնականում՝ օխրայով «օծելու») և ննջեցյալների սեռատարիքային բաժանումների վերաբերյալ հարցերը, իսկ թաղման ծիսակարգերի և մահվան պատկերացումների փոխկապակցվածությանը հարկ է առանձին անդրադառնալ:*

# FUNERARY RITUALS IN THE LATE BRONZE AGE ARMENIA

*GAREGIN TUMANYAN*

S u m m a r y

One of the main components of the funerary rite is its ritual, where the attitude of relatives toward the ash of the deceased is reflected. The ritual could be brought down to a number of elements: mortuary mode, funeral type, site of ashes (in a particular area of sepulture), position of skeleton, direction of corpse and face, resting place of ashes, etc. Each of the listed elements, in its turn, could be brought down to several components. For example, it is possible to single out the following modes of mortuary: a) interment, b) corpse partition, c) head interment, d) reburial, e) cremation, f) cenotaph. Some mortuary modes could have their variations: interment with separation of lower jaw from the skull or corpse partition when only head is separated from the body. Funeral types could be brought down to: a) individual, b) couple, c) mother and child, d) group (subtype - family) funerals, while skeleton position - to: a) contracted, b) sitting, c) laying on the back, d) ax squatting, and e) laying on the face. On the basis of the analysis of data from excavations of several dozens of cemeteries in the north-eastern regions of Armenian Highland, a conclusion was made that the most prestigious funerals were the interments with carts - a qualitative differentiating characteristic through which the deep social stratification of the society and the separation of nobility from ordinary community members are reflected in the funerary ritual.